եկամուտներ, քանի որ կ'ունենայ առատ բերքեր բերող շատ տեղեր եւ մշտապէս կը պահէ 15–ից մինչեւ 20 հազար զօրք, իսկ Թիւրքիայի կամ Պարսկաստանի դէմ պատերազմ լինելու դէպքում, ժամանակի ընթացքում նա ի վիճակի կը լինի գործադրել մինչեւ 60,000 եւ աւելի զօրք:

«Բացի դրանից, հայ ազգը կարող է պարտաւորուել հարկաւոր դէպքերում, Ռուսաստանին տալ այնքան զօրք, որքան կարող կը լինի ամէն մի անգամ եւ միշտ երախտապարտ կը մնայ Ռուսաստանին իր փրկութեան եւ վերականգնման համար:

«Թուրքաց պետութիւնը ժամանակի ընթացքում կը զգայ այս փոփոխութեան շնորհիւ առաջացած մեծ կորուստը թէ՛ իր ժողովրդի եւ թէ՛ եկամուտների: Իսկ առեւտուրը Պարսկաստանի եւ Ռուսաստանի միջեւ, որը երբեք ցանկալի բարձրութեան հասած չի եղել, Հայաստանում եւ Պարսկաստանում խաղաղութիւնը հաստատուելուց յետոյ, կը հասնի ցանկալի զրութեան, որից Ռուսաստանը միլիոնների օգուտ կը ստանայ»:

1780 թ. Յունուարի 13–ին էլ Սուվորովը տեսակցութիւն ունեցաւ Արղութեանի հետ յատկապէս Ղարաբաղի մելիքների մասին, որից յետոյ Սրբազանը մի մանրամասն տեղեկագիր ներկայացրեց Սուվորովին Ղարաբաղի մելիքներու մասին, որը տպագրուած է «Գործեր»ու մէջ, 52–63 երեսներում:

Այս ամենից պարզ երեւում է, որ Հայաստանի ազատութեան հարցը դիւանագիտօրէն միանգամայն հասունացած էր: Հայերը պատրաստ էին ամէն տեսակ զոհողութեան, իսկ ռուսներն էլ իրենց հերթական քաղաքական հարցերից մէկն էին նկատում այդ: Մնում էր, որ պայմանները հնարաւորութիւն տային Հայաստանի ազատութիւնը իրականացնելու:

Եւ այդ նպաստաւոր պայմանները շուտով հանդէս եկան:

9.

Նադիր Շահից յետոյ՝ Պարսկաստանը նորից խռովութիւնների մատնուեց: Այդ բանից օգուտ քաղելով, Եկատերինան զօրք ուղարկեց եւ նորից գրաւեց Դերբենդը, Բաղուն եւ Շամախին, որ Նադիրը յետ էր առել ռուսներից:

Ղարաբաղի մելիքների մէջ նորից բոցավառուեց ազատութեան յոյսը եւ նրանք վերջապէս իրենց աչքերը Ռուսաստանի վրայ դարձրին: Ջրաբերդի մելիք Մէջլումը, Գիւլիստանի մելիք Աբովը եւ Դիզակի մելիք Բախտամը, ռուս զորձակալների խոստումներից յորդորուած, Գանձասարի Յովհաննէս կաթողիկոսի գլխաւորութեամբ, հաւատարմութեան երդմնագրեր ուղարկեցին ռուսաց տէրութեանը (1787 թ.):

Իբրահիմ խանը, Փանահ խանի որդին, այս բանն իմանալով, կաթողիկոսին թունաւորել տուեց եւ մելիքների երկրները քարուքանդ արաւ: Անհամար հայեր կատաղի խանի սրին զոհ եղան. շատերն ստիպուեցին ուրանալու քրիստոնէութիւնը եւ կամ գաղթեցին դէպի ռուսական երկրները — Դերբենդ, Ղզլար, Աստրախան եւն. (Ս. Պալասանեան՝ «Պատմ. Հայոց», եր. 680):

Կատպիականի ափերը գրաւելուց յետոյ՝ ռուսական զօրքը Մոզդոկից ու Ղզլարից պիտի արշաւէր դէպի Անդրկովկաս՝ ոչնչացնելու Իբրահիմ խանին եւ Ղարաբաղից ու Ղարադաղից հայկական մէկ պետութիւն կազմելու, Ռուսաստանի հովանաւորութեան ներքոյ: Հայկական այս պետութեանը պիտի տրուէր մի այնպիսի կազմակերպութիւն, որ միւս տեղերի հայերն էլ նրա օրինակին հետեւելով, նոյնպէս ձգտէին անկախութեան:

Հայերի եւ մասնաւորապէս կաթողիկոսի համակրութիւնը շահելն էր հաւանօրէն պատճառը, որ Արղութեանը անշուշտ Պօտեմկինի ներշնչմամբ, էջմիածին ուղարկեց բժ. Յակովը Բէյնէգսին1), որը ճանապարհ ընկաւ Պօտեմ-

1) Բժ. Բէյնէգսը գերմանացի էր, ծնուած Մերզեբուրգի Այսլեբէն քաղաքում, 1744–ին: Աշխարհներ տեսնել փափաքելով, թողեց իր հայրենիքը եւ 1776–ին ճանապարհորդեց Վենետիկ, Պոլիս: Այստեղից էլ գնաց Թոքատ, Կարին եւ Կարսի վրայով Պարսկաստան, յատկապէս էջմիածինը տեսնելու համար: Գոհ սրտով հեռացաւ էջմիածնից, «աշխարհի գուցէ այդ ամենալաւ անկիւնից», հետեւելով վրաց Հերակլ թագաւորի հրաւէրին: Վերջնիս մօտ, Թիֆլիսում, նա մնաց մէկ ու կէս տարի, որ-